

տի եւ այդ յիշատակարանները մնացել են մեր ժողովածուի մէջ, որի առաջին հատորը՝ մինչեւ ԺԳ. դարի վերջերը կարգաւորուած եւ ծանօթութիւններով, յանձնուած էր Մելքոնեան Հիմնադրամի վարչութեան, որ պիտի տպագրուէր մեր քաջակալութեանն իսկ, բայց անկատար մնաց մեզ անյայտ պատճառով: Մէջ չեն բերուած նաեւ պատկերներ, որ պիտի մտնէին երկրորդ հատորի մէջ, բայց ձեռքի տակ չունէինք տպագրութեան յանձնելիս:

Ի վերջոյ ընթերցողի ուշադրութիւնը պիտի հրաւիրենք մի քանի կարեւոր սխալների վերայ, որ սպրդել է տպագրութեան ժամանակ, որ դնում ենք հատորի վերջում:

Մեր վանական գրիչներն ու հեղինակները սովորութիւն ունէին իրենց գործը աւարտելուց յետոյ, դո՛ւրստէն մատուցանել Աստուծոյ այդ առթիւ. կը կամենայինք պահպանած լինել այդ աւանդութիւնը այս աշխատութեան նկատմամբ, որ հեղինակի լոյս տեսած գործերի մէջ ընդարձակագոյնն է, ինքն էլ ենթակայ նոյն աստանդական կեանքին եւ դժուարութիւններին, ինչպէս իւր հեղինակը: Բայց օրհնեալ է Աստուած, որ ի վերջոյ մատչելի է դառնում բանասիրական գիտութեան եւ այս բանի համար երախտապարտ ենք մեկենաս տիկնոջը:

Օգոստոս, 1942

Նիւ-Եորք

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՏԵՂԵԱՍԳԻՐ Տ. ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐԺԻ

Սրբոց Թարգմանչաց — Դուրեան Դրական Մրցանակի

1935-1936 Շրջանի*

Գարեգին Սրբազանի երկը, «Հոգեւոր Կեդրոններ եւ Գլխավոր Բարձր Դպրոցը Պոչեանց Իշխանութեան Մէջ», թէեւ հապէս երկրորդ մասն է իր «Սաղբակեանք կամ Պոչեանք Հայոց Պատմութեան Մէջ» պատմա-հնագիտական ուսումնասիրութեան, որուն առաջին մասը ութ տարիներ առաջ, 1928-ին, հրատարակուեցաւ վաղարշապատ Պետհրատի տպագրութեամբ,** բայց ինքն ըստ ինքեան եւս կրնայ նկատուիլ առանձինն կամ ամբողջական գործ մը: Տպագրուածը քաղաքական պատմութիւնն էր Սաղբակեանք կամ Պոչեանք Տան, որ ԺԳ. դարու առաջին կիսուն մէջերը, երբ, Բագրատունեաց շիջումէն յետոյ, Սելճուքեան արշաւանքներու սաստկութեան երեսէն բոլորովին անյայտացած էին հայ իշխանական տոհմերու վերջին մնացորդներն ալ, Ջաքարեանց օրով, այսինքն վրաց անուանական գերիշխանութեան տակ աւատապետական կազմակերպութեամբ ծաղկիլ սկսած Հայաստանի քաղաքական եւ ղինուորական կեանքին մէջ երեսան եկաւ Սիւնեաց աշխարհի վայոց-Ձոր Գաւառին մէջ, Օրբելեանց կտին, բայց անոնցմէ աւելի երկարակեաց լինելով:†

Իշխանական այս Տունն էր որ տեւեց հինգ դարեր, ԺԳ.էն մինչեւ ԺԸ.ին սկիզբը, ծնունդ տալով քաղաքական գործիչներու կամ իշխաններու, որոնց մէջ ամենէն ականաւորներէն եղան Վասակ Սալեանցի, իր եղբարքը Ջաջուռ եւ Գրիգոր Սաղբակեան, և յաջորդաբար

Վասակ, Աշոտ, Պոչ մեծ իշխան, Ամիր-Հասան, Պապաք, Էյաչ, Ամիր-Հասան Բ., «Պարոն» Ջումէ, Միրզապէկ, Բիրթէլ, Ղալապէկ՝ որդի Քարամին, Դաւիթ մեծ, Դաւիթ փոքր եւ վերջապէս իրենց վերջին չառաւիղը՝ Հայկական ազատագրութեան յետնադոյն ռահ-վիրաներէն Իսրայէլ Օրին, որ 1711-ին փակեց իր ոգիսականը Աստրախանի մէջ:

Սոյն այս Սաղբակեան կամ Պոչեան Տան իշխանութեան քաղաքակրթական եւ հոգեւոր կեանքն է որ կը նկարագրէ Յովսէփեան Արքեպիսկոպոս՝ մրցանակի առաջարկած այս աշխատութեան մէջ, որ իր այդ պարունակութեամբ նոյն իսկ կը ներկայացնէ մեծագոյն չահեկանութիւն:

Կարելի չէ անշուշտ ըսել թէ իբրեւ հայրենագիտական երկ բոլորովին նորութիւն է ան, քանի որ իրմէ առաջ Շահխաթունեան Եպիսկոպոս իր «Ստորագրութիւն Հայաստանի» գործին, Բարխուդարեան եւ Սըմբատեան Եպիսկոպոսներ՝ իրենց տեղագրական հատորներուն, Լալայեան Աղգաղբական Հանդէսին, եւ մանաւանդ շ. Ալիշան իր համագրութիւններէն «Սիսական»ի մէջ, աւելի կամ նուազ մանրամասնութեամբ գրած են այս մասին: Բայց այդ ամէնը, հեռու՝ նուազեցնելէ արժէքը հմուտ հոգեւորականին այս գործին՝ ընդհակառակն աւելի կը շնչտեն դայն, քանի որ կարելի չէ անտեսել անոր ոչ միայն առաւելագոյն եւ բազմաբովանդակ ընդարձակութիւնը, այլ նաեւ այն հանգամանքը թէ անոր հեղինակը բոլոր վայրերն անձամբ այցելելով ինքնին տպաւորուած, քննած, արձանագրութիւնները ճշգրտած, թերիները լրացուցած եւ ըստ այնմ իբրեւ լիակատար ամբողջութիւն հրապարակ հանած է դայն: Բայց ոչ այսչափ միայն. Տ. Գարեգին Սրբազանի գործը սոսկ տեղագրական եւ վիճակագրական աշխատանք չէ. այդ բանը ի յայտ կուգայ բուն

*Տես Սիւն ամսագիր, 1936, Նոյեմբեր, էջ 338-340:

**Մեր ծախսով:

ՀԵՂԻՆԱԿ

†Օրբելեանց տոհմը շարունակուում է եւ այժմ, բայց բոլորովին կորցրած իւր իշխանական համգամանքը:

ՀԵՂԻՆԱԿ